

Սեդրա Ք. Գասպարյան
բանաս. գիտ. դոկտոր

**ԵՂԵՌՆ ԲԱՌԻ
ՀԱՍԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ԳԱՇՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ***

Տպագրվում է Հայաստանի գիտությունների ազգային
ակադեմիայի լեզվի ինստիտուտի ժամանակակից հայոց լեզվի բաժնի
երաշխավորությամբ

*In the beginning was the Word,
and the Word was with God,
and the Word was God.
(John 1.1)*

Բառապաշարը լեզվի ամենահարուստ գանձարանն է, ըստ էության՝ լեզվի հարստության չափանիշ: Բառերի օգնությամբ է, որ մարդը ճանաչում է աշխարհը, սովորում մտածել, արտահայտել իր մտքերն ու մտահոգությունները, հույզերն ու ապրումները: Եվ քանի որ բառերը, անցնելով դարերի միջով ու ենթարկվելով ինչպես առօրյա կյանքի, այնպես էլ հասարակական ու պատմաքաղաքական տարաբնույթ զարգացումների ազդեցությանը, հաճախ փոխում են իրենց իմաստը, խոսքաստեղծման ընթացքում կարևոր նշանակություն է ստանում նրանց ճիշտ ընտրության խնդիրը: Մոպասանի խոսքերով ասած՝ «ինչպիսին էլ լինի առարկան, որի մասին ուզում ես խոսել, կա միայն մեկ բառ, որ այն արտահայտես, մեկ ածական, որ այն բնութագրես, մեկ բայ, որ այն շնչավորես: ... հետևաբար պետք է փնտրել այդ գոյականը, այդ բայը, այդ ածականը...»¹

Բառը, օժտված լինելով տարողունակ դառնալու գործությամբ, տարբեր լեզվական ու արտալեզվական գործոնների ազդեցությամբ կարող է հարստանալ, հագնել նորանոր իմաստներով ու իմաստային երանգներով, գնահատողական-վերաբերմունքային բաղադրիչներով, ձեռք բերել խորություն

* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.03.2010:
1Stéu Guy de Maupassant, Etude prefacant le livre Lettres à George Sand, par Gustave Flaubert, Paris. G.Charpentier et Cie, 1884: http://flaubert.univ.rouen.fr/bovary_6/temoins/guy2.html

Ի(Ը) տարի, թիվ 1(29), հունվար-մարտ 2010

ՎԵՄ համահայկական հանդես

ու ծավալ, արտահայտել «մի ամբողջ աշխարհ»²: Սակայն այս ամենը առավել լիարժեք ու հստակ ի հայտ է գալիս խոսքում, որտեղ լեզվական համակարգի «անշունչ» միավորը վերածնվում է, դառնում հարաշարժ, իր մեջ խտացնում նաև խոսողի ապրումն ու վերաբերմունքը:³

Լեզվի այս բազմաբարդ միավորին առնչվող խնդիրներն առավել դժվար-հաղթահարելի են դառնում, երբ փորձում ենք մի լեզվի բառամիավորները համապատասխանաբար թարգմանել մի այլ լեզվի միջոցներով, այսինքն՝ հաղթահարել բազմալեզվության խոչընդոտը, ապահովել փոխճանաչում ու փոխըմբռնում տարբեր ազգերի միջև:

Այս դիտանկյունից քննենք հայերեն **եղեռն** բառի թարգմանական տարբերակների և դրանց համապատասխանության խնդիրը: Սակայն նախ անհրաժեշտություն կա պարզաբանելու, թե ինչ իմաստ է իր մեջ ամփոփում հայերենի այս բառամիավորը: Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանը»⁴ ներկայացնում է գերմանացի մեծ լեզվաբան Բյուզգեի կարծիքը, համաձայն որի հայերենի եղեռն, եղեր, եղուկ միավորները ծագում են հնդեվրոպական նախալեզվի gel- արմատից: Համեմատելով հին բարձր գերմաներենի *quellan*, հին սաքսոներենի *quellian*, հին անգլերենի *cwelan* → *kill*⁵ ձևերի հետ՝ կարելի է նկատել, որ այս բառի հիմքում *սպանել, ոճիր գործել* իմաստն է: Ա.Սուքիասյանի «Հայերենի հոմանիշների բացատրական բառարանում»⁶ բերվում է հոմանիշների մի ամբողջ շարք (ոճիր, ոճրագործություն, եղեռնագործություն, չարագործություն /մարդասպանություն/, ծանր հանցագործություն, սպանություն, կոտորած, ջարդ, նախճիր, սպանդ, արյուն/ա/հեղություն, սրածություն, յաթաղան, խողխողում, եղեռնություն/հնգ./, **ցեղասպանություն**), որոնք, իհարկե, չեն նույնանում, բայց բոլորն էլ իրենց հիմքում *սպանել* (նույնն է, թե *ոճիր գործել*) իմաստային բաղադրիչն ունեն:⁷

Եթե փորձենք քննության առնել հայերեն-անգլերեն բառարանների⁸ տվյալները, կարելի է նկատել, որ **եղեռն** բառը մեկնաբանվում է հետևյալ անգլերեն տարբերակներով. *crime* (ոճիր), *misdeemeanour* (չար ընթացք, վատաբարոյություն), *offence* (անարգանք), *rascality* (ստորություն, անըզգամություն), *slaughter* (սպանդ, նախճիր, կոտորած, ջարդ), *carnage* (նախճիր), *massacre* (կոտորած, ջարդ), ***genocide*** (ցեղասպանություն):

Հոմանիշների այս ընդգրկումն իմաստային դաշտը կազմող միավորների մեջ կան ինչպես ընդհանրություններ, այնպես էլ ակնհայտ տարբերություններ: Եթե *crime* միավորը մեկնաբանվում է որպես *act (usu. grave offence) punishable*

2 Հայտնի է բառի թունճանյանական որակումը: Այս մասին տես Ռ. Իշխանյան, Արևելահայ բանաստեղծության լեզվի պատմություն: Եր., Երևանի համալսարանի հրատ., 1978:

3 Տես Պարույր Սևակ, Սայաթ Նովա: Եր., 1987, էջ136: Ռազմիկ Դավոյանի բանաստեղծական խորհրդածություններում «Գիշակերների, անտաղանդների ստրուկն է Բառը, / Նա Հանճարին է միայն հավասար»: Ռ.Դավոյան, Բառը // Մեղրահաց, Եր., Հայաստան հրատ., 1973, էջ 15:

4 Հր.Աճառյան, Հայերեն արմատական բառարան: Եր., Երևանի համալսարանի հրատ., 1973, հ.2, էջ17:

5 Տես А.И.Смирницкий, Хрестоматия по истории английского языка. М.: изд.-во Литературы на иностранных языках, 1953, стр. 160.

6 Տես Ա.Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան: 2-րդ հրատ., Եր., ԵՊՀ հրատարակչություն, 2009, էջ264:

7 *եղեռն* միավորի մանրամասն քննությունը տես Փ.Մեթիխանյան, Եղեռն բառի լեզվական քննություն, «Վեն» համահայկական հանդես: Եր., 2009, թիվ 1(26), էջ144-147:

8 Տես, օրինակ, Մ.Գոյունճեան, Ընդարձակ բառարան հայերեն անգլիերեն: Պէյրոս, Ատլաս, Մակ Ն.Բարաթյան և ուրիշներ, Հայերեն-անգլերեն բառարան: Եր., «Մակմիլան Արմենիա», 2002:

by law; evil act; such acts collectively (COD⁹, p.242), an act committed in violation of law forbidding or commanding it, and for which punishment is upon conviction (HIDEL, p.313), ապա misdemeanour բառը ներկայացնում է այնպիսի արարք, որը, թեև քրեորեն պատժելի է, սակայն նույնքան լուրջ չէ, որքան, ասենք, զոդությունն ու մարդասպանությունը (a crime that is less serious than, for example, stealing or murder - LDCE): *Offence* (attacking, aggressive action - COD) և *rascality* (dishonest behaviour - LDCE) բառամիավորներում *ոճիր* իմաստային բաղադրիչի առկայությունը, կարելի է ասել, ակնհայտ չէ. միշտ չէ, որ վիրավորելու, անարգելու միտումը կամ հարձակողականությունը և կամ անազնիվ վարքագիծը սպանելու գործողությամբ է ուղեկցվում: *Offence* և *rascality* միավորներում, անկասկած, առկա է բացասական ներհատուկ առնչանակային երանգ, բայցևայնպես սրանցում այդ երանգը զգալիորեն ավելի թույլ է արտահայտված, քան, օրինակ, *crime* բառում: Ինչ վերաբերում է *slaughter* (the killing or slaying of people in large numbers - OED), *carnage* (the slaughter of a great number, esp. of men; butchery, massacre - OED), *massacre* (the indiscriminate, merciless killing of a number of human beings - WNWD) քարգմանական տարբերակներին, ապա դրանք, համեմատաբար, առավել մոտ են իրար, և դրանց իմաստային կառուցվածքում գերակայող բաղադրիչը *ոճիրն* է՝ որևէ օրինական անհրաժեշտությամբ չչայանաավորված *ոճրագործությունը*:

Genocide հոմանշային միավորն իր իմաստային հագեցվածությամբ ամենաընդգրկունն է: Անգլերենի տարբեր բացատրական բառարաններում ներկայացվող մեկնաբանություններից առավել ամբողջական է թվում WTNID բառարանում բերվող սահմանումը (the use of deliberate systematic measures /as killing, bodily or mental injury, unlivable conditions, prevention of birth/ calculated to bring about the extermination of a racial, political, or cultural group, or to destroy the language, religion, or culture of a group): Այն հանգամանքը, որ այս բառամիավորը գիտական շրջանառության մեջ է մտել 1940-ական թվականներից հետո, ժամանակագրական առումով հիմնավորված է:

Բանն այն է, որ *genocide* բառը ստեղծվել է 1943թ. լեհ-հրեա իրավագետ Ռ-աֆայել Լեմկինի կողմից, որն իր հոդվածներից մեկում (Crime of Barbarity) բնութագրել է *ցեղասպանությունը (genocide)* որպես միջազգային իրավունքի դեմ ուղղված ոճիր՝ կապելով այն 1915թ. Օսմանյան կայսրությունում հայերի դեմ իրականացված եղեռնագործությունների հետ:¹⁰ Հետագայում Լեմկինը ցեղասպանությունը սահմանեց որպես ցանկացած գործողություն, որը կատարվում է ազգային, էթնիկական, ցեղային կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման միտումով և Միացյալ

9 Հոդվածում օգտագործվել են անգլերենի հետևյալ բացատրական բառարանները. The Concise Oxford Dictionary (COD). Oxford, Oxford University Press, 1976; The Heritage Illustrated Dictionary of the English Language (HIDEL). New York, 1973; Longman Dictionary of Contemporary English (LDCE). G.B., Longman Group, 1978; The Oxford English Dictionary (OED). Oxford, Clarendon Press, 1961-1970, vol.II; Webster's New World Dictionary (WNWD). Cleveland & New York, The World Publishing Comp., 1951; Webster's Third New International Dictionary (WTNID). Springfield, Mass., Merriam-Webster Inc., 1981: 10 1944թ. Միացյալ Նահանգներում լույս տեսավ Լեմկինի Axis Rule in Occupied Europe աշխատությունը, որտեղ հեղինակը հանգամանալից իրավագիտական վերլուծության ենթարկեց նացիստական Գերմանիայի վարած քաղաքականությունը Երկրորդ աշխարհամարտի տարիներին և առավել հանգամանորեն քննեց ու լրացրեց *ցեղնցիղ* եզրույթին տված իր մեկնաբանությունները: <http://en.wikipedia.org/wiki/Genocide>

Նահանգների աջակցությամբ ներկայացրեց Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի քննարկմանը: Ավելի ուշ՝ 1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ն ընդունեց «Ցեղասպանություն հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան, որի 2-րդ հոդվածի հիմքում Լեմկինցի սահմանումն է:¹¹

Genocide միավորի հիմքում լատինական *gens, gentis* (ծնունդ, ռասա, գեն /կսբ./, տեսակ) կամ հունարեն *genos* (նույն նշանակությամբ) արմատն է և լատինական *cidium* (cutting, killing) միավորը, որը ֆրանսերենի միջոցով անցել է անգլերեն որպես *cide* (the act of killing):

Անդրադառնալով համարժեքության խնդրին՝ նախ նշենք, որ ըստ տերմինաբանական բառարանների, թարգմանություն եզրն ունի տարբեր մեկնաբանություններ:¹² Լեզվի մակարդակում և մասնավորապես բառարանագրության մեջ թարգմանությունը սահմանվում է որպես երկու կամ մի քանի լեզուների զուգադրում դրանց միավորների միջև իմաստային համապատասխանություններ գտնելու նպատակով: Ուրիշ խոսքով, այն ենթադրում է մի լեզվական համակարգում ամրագրված բառամիավորների զուգադրում մեկ այլ լեզվի նույնական կամ համապատասխան միավորների հետ:

Ինչպես ցույց են տալիս վերը բերված մեկնաբանությունների զուգադրումն ու քննությունը, բառը որպես իմաստակիր միավոր միատարր չէ, և քանի որ բառերը երբեք ուղղակիորեն չեն զուգադիպում իրենց ողջ իմաստային կառուցվածքով (այսինքն՝ տվյալ իմույթը կազմող բոլոր իմակների ամբողջական կազմով), ապա, ընդհանուր առմամբ, չի կարող խոսք գնալ բացարձակ հոմանշության մասին: Բառիմաստի բովանդակության պլանը կազմող նվազագույն տարրերից յուրաքանչյուրը կարող է իրացվել բառի այս կամ այն կիրառության դեպքում՝ կախված կոնկրետ խոսքային իրադրությունից: Եվ հենց այստեղ է, որ չպետք է անտեսվի լեզվաբանության մեջ հայտնի և հիմնարար նշանակություն ունեցող լեզու/խոսք հակադրամիասնության դրույթը¹³, որը թույլ է տալիս դիտարկել համարժեքության խնդիրը լեզվական համարժեքության և խոսքային համարժեքության դիալեկտիկական հարաբերակցության դիրքերից, թեև սա ամենևին էլ չի նշանակում, թե համարժեք միավորը գտնելու միակ նախապայմանը բնագրային համատեքստն ու խոսքային իրադրությունը գննելն է: Առաջին քայլը հենց այն թարգմանական միավորների որոշարկումն է, որոնք, անկախ համատեքստից ու խոսքային իրադրությունից, որպես լեզվական համակարգի բաղադրատարրեր՝ մշտապես համարժեք են աղբյուր լեզվի համապատասխան միավորներին: Լեզվական համարժեքությունը ներկայացնող այս տեղեկությունների հուսալի աղբյուրն, անշուշտ, բացատրական, այդ թվում նաև հոմանշային բառարաններն են, որոնք հենվում են բառիմաստի իմաստային բաղադրիչների քննության արդյունքների վրա:

11 In the present convention, genocide means any of the following acts committed with the intent to destroy, in whole or in part, a national, ethnical, racial or religious group as such: a/ killing members of the group; b/ causing serious bodily or mental harm to members of the group; c/ deliberately inflicting on the group conditions of life calculated to bring about its physical destruction in whole or in part; d/ imposing measures intended to prevent births within the group; e/ forcibly transferring children of the group to another group. (Stu Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, Article II)

12 Տե՛ս Օ.Ս. Ахманова, Словарь лингвистических терминов. М., изд-во Советская энциклопедия, 1966.

13 Տե՛ս А.И.Смирницкий, Объективность существования языка. М.: МГУ, 1954.

Եղեռն բառի լեզվական համարժեքության դաշտում *crime*-ը կարելի է համարել չտարբերակված միավոր, քանի որ նրանով արտահայտված իմաստը ընդհանուր է և առկա այդ դաշտի գրեթե բոլոր միավորներում: **Եղեռն**-ին զգալիորեն մոտ են *slaughter* (ջարդ, մասսայական կոտորած, սպանդ), *carnage* (կոտորած, արյունահեղություն, նախճիր), *massacre* (զանգվածային սպանություն, ջարդ, կոտորած, վարակիչ հիվանդություններից կամ որևէ աղետից մեծաքանակ մահացություն) տարբերակները, որոնք, սակայն, շեշտադրում են **եղեռն** բառի իմաստային կազմում առկա տարբեր իմակներ: Երևույթի ընդհանրացած ու ամբողջական պատկերը արտացոլվում է **genocide** միավորում, որի օգնությամբ էլ հնարավոր է դառնում քննել, հասկանալ, արժևորել այս կամ այն համատեքստը, իսկ համատեքստի դերը չի կարելի թերագնահատել համարժեք միավորի ընտրության հարցում: Բանն այն է, որ լիակատար համարժեքությունը ձեռք է բերվում ոչ միայն իմաստային, այլև ոճագործառական և գործաբանական համապատասխանությունների առկայության դեպքում, երբ թիրախ լեզվում ընտրված միավորը (բառ, նախադասություն, տեքստ և այլն) հավասարագոր է աղբյուր լեզվի միավորին թե՛ իմաստային և թե՛ ոճական ու գործաբանական արժեքներով: Ու թեև առաջնային է իմաստային բաղադրիչը, որի համարժեքությունը չապահովելու դեպքում չի իրացվի թարգմանության կարևորագույն միջլեզվական հաղորդակցման գործառույթը, և հաղորդակցումը պարզապես չի իրականանա, այդուհանդերձ համարժեքության կայացման գործում ոչ պակաս կարևոր է նաև մյուս բաղկացուցիչների դերը: Կոնկրետ համատեքստում և կոնկրետ խոսքային իրադրության մեջ է, որ բառը տարաբնույթ լեզվական ու արտալեզվական գործոնների ազդեցությամբ ձեռք է բերում լրացուցիչ իմաստաճանակներ, դրսևորվում այս կամ այն գործաբանական իմաստով: Զննենք **եղեռն** բառամիավորով արտահայտված իմաստի համատեքստային իրացման մի քանի դեպք.

If nations are allowed to commit genocide with impunity, to hide their guilt in a camouflage of lies and denials there is a real danger that other brutal regimes will be encouraged to attempt genocides. Unless we speak today of the Armenian genocide and unless the Government recognizes this historical fact, we shall leave this century of unprecedented genocides with this blot on our consciences.

*Caroline, Baroness Cox
House of Lords, 4/1/1999¹⁴*

Հատվածում բանախոսը լուրջ մտահոգություն է արտահայտում այն փաստի առնչությամբ, որ Հայոց ցեղասպանությունը բացահայտորեն չընդունելը կարող է խրախուսել այլ վարչակարգերի՝ այդօրինակ վայրագ գործողությունների դիմելը: Եթե ազգերին թույլ տրվի ցեղասպանություն իրականացնել և մնալ անպատիժ՝ իրենց մեղքը քողարկելով ստի ու հերքումների շղարշով, ապա մեր դարաշրջանը կարող է վերածվել աննախընթաց եղեռների ժամանակաշրջանի:

14 www.genocide1915.info/quotes/

Հատվածը հազեցած է բացասական առնչանակային երանգներով օժտված մի շարք միավորներով (*commit genocide, impunity, hide the guilt in a camouflage of lies and denials, danger, brutal regimes, unprecedented genocides, blot*), որոնց զուգակցումն այս համատեքստում արտահայտում է խոսողի բացասական վերաբերմունքը ամեն տեսակի ցեղասպանությունների և, մասնավորապես՝ Հայոց ցեղասպանությունը հրահրողների ու հանդուրժողների նկատմամբ: Բանախոսը համոզված է, որ եթե Հայոց ցեղասպանությունը չճանաչվի որպես այդպիսին, ապա նախատինքի արժանի այդ արարքը (*blot*) կծանրանա մարդկության խղճի վրա:

Genocide միավորի չորս գործածություններն այս փոքր հատվածում միտված են լսողին ահազանգելու հնարավոր վտանգի մեծությունն ու կործանարարությունը (*a real danger*) մարդկային հասարակության համար ընդհանրապես և սթափեցնելու այս հարցի քննարկման մեջ որոշիչ դեր ունեցողներին՝ նրանց մղելով ուղղամտության ու ազնիվ վերաբերմունքի:

Հաջորդ հատվածը Հայաստանում Միացյալ Նահանգների նախկին դեսպան Ջոն Էվանսի՝ ամերիկահայությանն ուղղված ելույթից է:

Today I shall call this Armenian genocide. I think that we, the US government, owe you, our fellow citizens, a more straightforward and honest discussion of this problem. I can tell you as a person who has studied this problem – I have no doubts about what happened. I think that it is inappropriate for us, the Americans, to play with words in this case. I believe that we must call a spade a spade.

John Evans

US Ambassador to Armenia

Addressed to American Armenians on February 19, 2005¹⁵

Հատվածի համատեքստը հուզարտահայտչական երանգների հազեցվածության առումով ակնհայտորեն տարբերվում է նախորդից. գերակշռում են ոճական առումով չեզոք միավորները (*US government, fellow citizens, straightforward discussion of the problem, tell, a person who has studied this problem, about what happened* և այլն), որոնց առկայությունն այստեղ վկայում է, որ խոսողի նպատակն է ունկնդրին ներկայացնել պատմական փաստերի հետազոտական ուսումնասիրությունների արդյունքում ձևավորված իր համոզմունքը այն հարցում, որ դարասկզբին Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ իրականացված **եղեռնը** ոչ այլ ինչ է, քան **ցեղասպանություն (genocide)**:

Հեղինակն այստեղ մտադրություն չունի ներազդել իր ունկնդրի վրա, բորբոքել նրա դեռևս չսպիացած վերքերը: Նրա խոսքը հիմնված է այն ճշմարտության վրա, որն ինքը բացահայտել է պատմական փաստերի իր իսկ քննությամբ (*as a person who has studied this problem*): Հատվածում որոշիչ դեր ունի *to call a spade a spade* (իրերն իրենց անունով կոչել) դարձույթի գործածությունը: Այն, մի կողմից, հաստատում է, որ **genocide** բառն է այդ իրադարձությունները համապատասխանաբար արժևորող համարժեք միավորը, մյուս

¹⁵ <http://www.genocide-museum.am/eng/quotations.php>

կողմից, ներակա հորդոր է ներմուծում համատեքստ՝ վեր կանգնելու ամեն տեսակ քաղաքական նկատառումներից և Հայոց եղեռնի երևույթն իր համարժեք անունով կոչելու **genocide**:

Ստորև բերվող տեքստը՝ ըստ էության, ներկայացնում է տարբեր ոլորտների՝ թվով 68 մասնագետների ստորագրած կոչը, որը 2008 թվականին ուղղվել է Շվեդիայի խորհրդարանին:

The Armenian Genocide, which also engulfed the Assyrians, Pontic Greeks and other minorities in the Ottoman Empire, began more than nine decades ago in 1915, but this issue gains added urgency the longer that denial of the crime continues. The genocide, or “extermination” as it was labeled by the international media and diplomatic corps, was an established fact for the world community. During the brief postwar period following the defeat of Turkey in 1918 until the rise of the Turkish Nationalist movement led by Mustafa Kemal, the annihilation of the Armenians was discussed openly. Turkish court martial tribunals tried political and military leaders implicated in “war crimes” and “crimes against humanity.” Several of the accused were found guilty and sentenced to death or given prison terms. Post-war Turkey passed through a phase similar to that of Germany after World War II. During these proceedings, the truth about the persecution of the minorities in the Ottoman Empire was brought to light with horrifying details.

The process did not last long, however. The rise of the Turkish Nationalist movement and rejection of the sultan’s government ultimately led to the disbanding of the tribunals and the release of most of the accused. Almost all of the remaining Christian population – Armenian, Assyrian, and Greek – was then cleansed from their homelands of several millennia. Much of the court data and protocols disappeared, and Turkey entered a period of trying to erase all traces of Armenian existence in Anatolia and the historic Armenian plateau to the east.

Nine decades later, the once so-called “forgotten genocide” is no longer forgotten and warrants growing attention among academic and political circles. It is seen as a prototype of mass killing in the twentieth century and can be viewed as one of the most successful campaigns of genocide and ethnic cleansing in all history. The victimization of the Armenians extended to the Assyrian, Greek, Yezidi, and even Kurdish population, which was subjected to extensive “social engineering” through forced relocation and resettlement. As it happened the Turkish authorities became the beneficiaries of an “Armenia without Armenians” and, despite worldwide pledges and promises to punish the perpetrators, escaped any responsibility for the crime. Today, Turkey implements an active campaign of denial. Silence and passivity on the part of the world community, including Sweden, can only aid and abet

this campaign. All the arguments relating to the need for further research or lack of consensus among scholars are spurious. The archives of every major country in Europe leave no doubt about the campaign of annihilation which occurred under the cover of a world conflict. The denialist arguments are all politically motivated and have nothing to do with the historical record. They are no more credible than those of Holocaust deniers such as Robert Faurisson, David Irving, Willis Carto, and Ernst Zundel.

Raphael Lemkin, who coined the term genocide in the 1940s and was the principal author of the U.N. Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide, was deeply aware of the Armenian calamity and the failure of the international community to intercede or at least to punish the authors of the genocide. Recent research has demonstrated how deeply he was affected by the absence of effective international machinery to intervene at the times. He was also troubled by the persecution and massacres of the Assyrians in Iraq during the 1930s. What is more, newly conducted research at Uppsala University confirms that the Swedish Foreign Department and Government, through the reports of Ambassador Per Gustaf August Cosswa Anckarsvard's and Military Attache Einar af Wirsén, were well aware of the annihilation that was occurring in the Ottoman Empire.

Today, Sweden is internationally regarded as a champion of human rights. It is incumbent on the Swedish authorities to live up to this reputation and to reject any compromise with negationism and denial. The Swedish Government should attempt to assist Turkey to become a better democracy by facing its history and acknowledging the truth, not by continuing to stagger in the darkness of self-deception and pretense. Today, the data and information about the Genocide of Armenians, Assyrians and Pontic Greeks are so extensive that no serious politician can honestly cite insufficient or inconclusive research as an excuse to avoid recognition. Refusal to recognize established fact based on qualitative and quantitative research may be regarded as being tantamount to denial. The researchers have done their job in establishing the reality of the Armenian Genocide. Now, the turn has come for the political leaders to fulfill their responsibility by recognizing this calamity for what it was.

The signatories of this letter do not consider there is any doubt that the massacres of Christians and other minorities in the Ottoman Empire during the World War I constituted genocide. Even though research must and will continue, the existing information is compelling and must be acknowledged as such.¹⁶

16 itwasgenocide.armenica.org

Կոչը կառուցված է տարբեր փաստական տվյալների հիման վրա: Այն միտված է արտահայտելու ստորագրողների աներկբա համոզմունքն այն հարցում, որ Հայոց ցեղասպանության ընդունումը ոչ միայն ամենաազնիվ, արդարացի և միակ ճանապարհն է՝ խուսափելու համաշխարհային հանրության համար կասկածից վեր և այլևս հաստատված ճշմարտության դեմ մեղանշելուց: Դա նաև լավագույն միջոցն է օգնելու Թուրքիային՝ զերծ մնալ ինքնախաբեությունից, ճիշտ արժևորել իր պատմությունը և առավել հաստատուն քայլերով շարժվել դեպի ժողովրդավարական հասարակություն: Հետպատերազմյան Թուրքիայում առիթներ եղել են վերհանելու և դատապարտելու Օսմանյան կայսրության կողմից ազգային փոքրամասնությունների նկատմամբ սահմնկեցուցիչ եղանակներով ու միջոցներով կիրառված հալածանքները որպես պատերազմական ոճրագործություններ: Սակայն այդ գործընթացը երկար չի տևել: Թուրք ազգայնականների զորացման փուլում ցրվել են նախկին դատական ատյանները, ու շատ մեղադրյալներ ազատ արձակվել, իսկ դատավարությունների արձանագրություններն ու ճշմարտությունն արտացոլող շատ փաստեր պարզապես անհետացել են: Բայց չէ՞ որ Թուրքիայի գոհասեղանին ոչ միայն հայերն էին, այլև ասորիները, հույներն ու եզդիները և նույնիսկ՝ քրդերը: Ավելին, իրողությունն այն է, որ չնայած միջազգային մասշտաբով հայերին տրված խոստումներին՝ այդ ոճիրը մնաց անպատիժ: Այսօր Թուրքիան գործի է գցել Հայոց ցեղասպանությունը հերքելու քարոզարշավի իր մեքենան: Լուռ ու անգործուն վերաբերմունքը կարող է միայն քաջալերել ստի այդ քարոզարշավը: Իսկ այն փաստարկները, որոնք վերաբերում են գիտական տարբեր շրջանակներում փոխհամաձայնության բացակայությանը և այս հարցի պարզաբանմանն ուղղված հետազոտական ուսումնասիրությունները շարունակելու անհրաժեշտությանը, իհարկե, շինծու են ու հորինված: Եվրոպական տարբեր երկրներում առկա արխիվային նյութերը միանգամայն բավարար են հաստատելու համար այն ճշմարտությունը, որ այն, ինչ ներկայացվում է որպես պատերազմական հակամարտության արդյունք, իրականում մի ողջ ազգի բնաջնջման արշավ էր:

Շվեդիայի խորհրդարանին ուղղված կոչի համատեքստը հետաքրքրական է այն առումով, որ այստեղ լեզվական տարբեր միավորներով ներկայացված է **genocide** բառի իմաստային ամբողջությունը կազմող բաղադրիչների զգալի մեծամասնությունը (*extermination, crime, ethnic cleansing, cleanse from their homelands of several millennia, victimization, forced relocation and resettlement, campaign of annihilation, mass killing, massacres*): Չնայած գործառական տեսանկյունից իր ակնհայտ տեղեկատվական, փաստագրական բնույթին, այս համատեքստն, այնուամենայնիվ, զերծ չէ հրապարակախոսական ոճին բնորոշ տարրերից, այդ թվում նաև՝ հուզական-արտահայտչական-գնահատողական երանգներ պարունակող բազմաթիվ միավորներից, և դա հասկանալի է, քանի որ կոչը միտված էր սքափեցնելու Շվեդիայի խորհրդարանին, հանելու միջազգային հանրությանը մարդկային ճակատագրերի հանդեպ դրսևորվող անտարբերության թմբիրից, նրա գիտակցության մեջ արթնացնելու շիտակության ու արդարամտության նախանձախնդրություն:

Բացի քննական առումով հետաքրքրություն ներկայացնող վերը բերված միավորներից, որոնք բոլորն էլ բացասական ներհատուկ առնչանակային արժեք ունեն, ընդհանուր համատեքստը թե՛ շարադրանքով (հորիզոնական համատեքստ) և թե՛ տողերի արանքում խտացած պատմաքաղաքական իրադարձությունների մերժելիությամբ (ուղղաձիգ համատեքստ) հագեցած է բացասական գնահատողական երանգներով (*accused, guilty, sentenced to death, persecution of the minorities, horrifying details, much of the court data and protocols disappeared, a period of trying to erase all traces of Armenian existence in Anatolia, the victimization of the Armenians extended to the Assyrian, Greek, Yezidi and even Kurdish population, "social engineering" through forced relocation and resettlement, Turkish authorities became the beneficiaries of an "Armenia without Armenians", ... escaped any responsibility for the crime* և այլն): Հետաքրքրական է նաև եզրաբանական արժեք ունեցող "social engineering" բառակապակցության գործածությունը, որն իր իմաստով¹⁷ որևէ կապ չունենալով ընդհանուր համատեքստային բովանդակության հետ, ոճական հակիմաստություն է ստեղծում և ձեռք բերում ակնհայտ հեզմական երանգ: Հեզմանք արտահայտող ոճական այս հնարի իրացմանը նպաստում են նաև չակերտները: Լեզվաոճական բոլոր այս միջոցների համադրմամբ էլ դրսևորվում է կոչը ներկայացնողների բուն մտադրության գործաբանական արժեքը՝ հնարավորինս ճշմարիտ ներկայացնել դարասկզբին կատարված Մեծ եղեռնի պատկերը և դրա անհանդուրժելիությունը աշխարհի առաջադեմ մարդկության համար, որոնց շարքերում, նրանց համոզմամբ, կկանգնի նաև Շվեդիայի խորհրդարանը:

Նշենք, որ 2010թ. մարտի 11-ին Շվեդիայի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաև ասորիների ու պոնտացի հույների բնաջնջման փաստերը, ինչը դարձավ սույն կոչի արդյունավետության ապացույցը:


Ինչ վերաբերում է համատեքստում գործածվող calamity (աղետ) բառին, ապա այս միավորը աչքի է ընկնում իր չափազանց լայն, անորոշ ու չտարբերակված իմաստային բովանդակությամբ: Ուսումնասիրելով անգլերենի հոմանիշների բառարանում¹⁸ ներկայացված calamity միավորի հոմանիշների շարքը (1. trouble, distress, misfortune, misery, unhappiness, affliction; 2. referring to an instance of what is calamitous: trouble, misfortune, misery, distress, disaster (implying unforeseen and adverse forces), catastrophe (with implications of finality), blow, scourge (implies severe and continued calamity); curse; /spec./fatality)՝ գալիս ենք այն համոզման, որ թեև ցանկացած ծանր դժբախտություն, չարիք, այդ թվում՝ պատերազմ, կոտորած ու ավերածություն, լայն իմաստով աղետ է¹⁹, այդուհանդերձ calamity միավորը անգոր է հաղորդելու Հայոց Մեծ եղեռնն իր բոլոր կողմերի ընդգրկումով:

17 Անգլերենի WTNID բացատրական բառարանը *social engineering* եզրաբանական կապակցությունը մեկնաբանում է որպես մարդկային ռեսուրսների կառավարում հասարակության մեջ մարդու տեղի և գործառույթի նկատմամբ հարգանքի դրսևորումով:

18 Տե՛ս Sturges, Allen, Synonyms and Antonyms. Maud Publication, 1994.

19 Տե՛ս Էդ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան: Եր., Հայաստան հրատ., 1976, հ.1:

Կատարված ուսումնասիրության արդյունքները կարող են ամփոփ
 ներկայացվել հետևյալ գծապատկերմամբ:



Այսպիսով, հայերեն **եղենն** բառի և անգլերենում դրա համարժեքության
 դաշտի մեր քննությունը լեզվի և խոսքի մակարդակներում բերում է այն հստակ
 համոզման, որ **եղենն**-ի համապատասխան համարժեքը անգլերենում **genocide**
 բառն է՝ միջազգայնորեն հաստատված միակ միավորը:²⁰

20 Մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ այս միավորների համարժեքության բաց
 գիտակցումով է, որ, հիշատակելով 1915թ. Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրագործվածը,
 ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման 2009թ. ապրիլի 24-ին արտասանած իր ճառում օգտագործել է
 “the Meds Yeghern” արտահայտությունը /<http://www.whitehouse.gov/the-press-office/>: Սրա տրամաբա-
 նական շարունակությունը պետք է որ լինի միջազգային իրավունքի ոլորտում այլևս հաստատված **geno-
 cide** եզրույթի գործածումը:

Summary

THE WORD ԵՂԵՐՆ (YEGHERN) AND THE SEMANTIC FIELD OF ITS EQUIVALENCE IN ENGLISH

Recommended for publication by the Department of Contemporary Armenian,
Institute of Language, Armenian National Academy of Sciences

Seda Gasparian
Doctor of Philology

The article deals with the study of the Armenian word *եղեռն* (*yeghern*) and the semantic field of its equivalence in English. Proceeding from the well-established statement of the dialectical correlation between language and speech the author carries out the research on both the emic level (i.e. the language system) and the etic one (i.e. from the point of view of its functioning in speech). The study of the field of equivalence in the language system is based on different data registered in Armenian and English monolingual and bilingual dictionaries.

The confrontative study of these data reveals the presence of a common dominant seme (crime) in the semantic structure of the majority of them, as well as the possibility of rejecting some of the semantic equivalents offered.

By the research carried out on the etic level it is established that full equivalence is provided not only by semantic but also stylistic and pragmatic adequacy of linguistic elements. The role of the horizontal and vertical contexts, as well as the speech situation cannot be underestimated.

In the closing part of the article, the results of the investigation are summed up graphically presenting the constituent semes in the semantic globality of the word *genocide* - the only internationally established term, equivalent to the Armenian word *եղեռն* (*yeghern*).